**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---------------------------------------------------------------------------------------------------

N-h-75-h-5

**2.09.2016**

**ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանին**

Հարգելի պարոն Գյոզալյան,

Կրթության և գիտության նախարարությունը 2016թ. պայմանագրեր է կնքել տարբեր հրատարակչությունների հետ՝ հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների համար դասագրքերի ձեռք բերման նպատակով: Հրատարակչությունները պարտավորվել են իրենց կողմից ձեռք բերված դասագրքերը առաքել մարզպետարաններ: Խնդրում ենք տեղեկացնել.

1) Ո՞ր հրատարակչություններն են 2016թ. դասագիրք մատակարարել Արագածոտնի մարզպետարանին: Խնդրում ենք տրամադրել այս տեղեկատվությունը՝ նշելով.
   - հրատարակչության անվանումը, մակարարած դասագրքի անվանումը և մատակարարված դասագրքերի քանակը:
2) Խնդրում ենք տրամադրել հրատարակչության կողմից մարզպետարան առաքված դասագրքերի մատակարարումը վկայող փաստաթղթի՝ հանձնման-ընդունման արձանագրությունների (կամ հաշիվ-ապրանքագրի) պատճենը:

Հարգանքով՝ «Հետք» թերթի լրագրող Մարինե Մաղաթյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 38 35
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 38 35
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 38 35 e-mail aragatsotn@mta.gov.am


______________________N______________________

Ի պատասխան Ձեր՝ 02.09.2016թ . թիվ հ-75-հ-5 գրության

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>>
հասարակական կազմակերպություն
<<Հետք>> թերթի լրագրող
Մարինե Մադաթյանին

Հարգելի Մարինե Մադաթյան

Ձեզ ենք ուղարկում ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներին 2016թ. Դասագրքեր մատակարարող հրատարակչությունների կողմից դասագրքերի մատակարարումը վկայող փաստաթղթերի՝ հանձման–ընդունման արձանագրությունների (կամ հաշիվ-ապրանքագրերի) պատճենը Ձեր կողմից նշված հասցեով:

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Նազարյան
հեռ.՝/0232/338-70